

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի նախագահ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 փետրվար, 2023 թվականի N 8-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ **ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ**։

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2023 թվականի փետրվարի 28-ին՝ ժամը 12:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

1. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության լսողական ծրագրերի՝ 2023 թվականի մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդագանցերը հաստատելու մասին հարցը:
2. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության տեսալսողական ծրագրի՝ 2023 թվականի մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդագանցը հաստատելու մասին հարցը:
3. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության տեսալսողական ծրագրերի՝ 2023 թվականի մարտ, ապրիլ, մայիս եվ հունիս ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդագանցերը հաստատելու մասին հարցը:
4. Հանրային հեռարձակողի խորհրդի 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 52-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:
5. Հանրային հեռարձակողի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 70-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:
6. Հանրային հեռարձակողի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 69-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
24 փետրվար, 2023 թվական
ք. Երևան

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ